ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/205

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ
Մասնակից՝ «Սի Թի Էս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Սի Թի Էս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ն. Խաչատրյանի, Հ. Ենգոյանի, Ա. Պարանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱՊԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ներքին համակարգչային ցանցի եվ վիդեոխցիկների տեղադրման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13360-2020 գրությամբ «Սի Թի Էս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 27.08.2020թ.-ի թիվ 1248/20 գրության հիման վրա, 04.09.2020թ.-ին «Սի Թի Էս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի (Գ. Ներսիսյանի) 07.09.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ՍՑ-ՆԳ-2020/225 համարի ծածկագիրը, իսկ 10.09.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 14.09.2020թ.-ի թիվ 255-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2020-2021թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ՍՑ-ՆԳ-2020/225 համարի ծածկագրով ընթացակարգի քննությունը 15.09.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

16.09.2020թ.-ին կայացված որոշմամբ ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/205 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

23.09.2020թ.-ին և 02.10.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 23.09.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 02.10.2020թ.-ին:

2. «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ն 27.08.2020թ.-ի թիվ 1248/20 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

««Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ներքին

համակարգչային ցանցի և վիդեոխցիկների տեղադրման աշխատանքների ձեռքբերման համար կազմակերպված ՀԱՊԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից՝ <<Սի Թի էս» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագիրը կնքելուց, ուստի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ մասի բ. պարբերությունը «որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց», որոշեց մերժել Սի Թի էՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Քանի որ ի հայտ են եկել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը, ուստի Ձեզ ենք ներկայուսցնում «Սի Թի էս» ՍՊԸ-ի տվյալները և ՀԱՊԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով գնման ընթացակարգի արձանագրություն-ները:»:

3. <u>«Սի Թի էս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 07.09.2020թ.-ին գրությամբ դիմել է «Սի Թի էս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13360-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը 00.09.2020թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Հոգեկան առողջության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարվել է «ՀԱՊԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սի Թի էՍ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի Հրավերով սահմանվել է աշխատանքների կատարման համար հետևյալ տեխնիկական բնութագիրը.

*ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավորի գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը**
1	51311400	ՀՀ ԱՆ "Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն"	դրամ			1	Ք. Երևան, Նուբարաշեն 1/3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց

		ՓԲԸ-ի ներքին համակարգչային ցանցի եվ վիդեոխցիկների տեղադրման աշխատանքներ Տեխնիկական բնութագիրը կից ներկայացվում է:						սկսած մինչև 2020թ.-ի հոկտեմբերի 31-ը:

Աշխատանքը կատարելու համար օգտագործվող ապրանքները մատակարարում է կատարողը:

Ապրանքները պետք է բավարարեն կցված տեխնիկական բնութագրով սահմանված պարամետրերին, պահանջներին և երաշխիքային ժամկետներին:

Բոլոր սարքավորումները ունենան մեկ տարվա երաշխիքային ժամկետ և կատարողը պարտավորվում է երաշխիքային ժամկետում ի հայտ եկած թերությունները շտկել սեփական միջոցների հաշվին:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1 - 9 բաժանմունքներում, Վարչությունում և բակի տարածքում տեսախցիկների և Համակարգչային սարգավորումների տեղադրում

Ամբողջ շինության տարածքում անցկացվում է FTP Մալուղ Ընդհանուր 2440 Մետր

1, 2, 3,4,5,8,9 երորդ բաժանմունքում տեղադրվում է թվով 1 համակարգիչ, համակարգչի մեջ տեղադրվում է Windows 10 pro,office 2016,միացում տպիչներին driver, տեղադրվում է թվով 2 IP Camera ,1 Հատ switch, 1 հատ Power Supply, այդ բաժանմունքում ընդհանուր ոգտագորցվելու է մոտ 366 մետր FTP Մալուխ 930 մ/ք տարացքում և բաժանմունքը միանում է ընդհանուր ցանցին, 1, 2, 3,4,5,8,9 երորդ բաժանմունքները ընդհանուր 6510 քառակուսի մետր է՝

6 և 7 երորդ բաժանմունքներում տեղադրվում է թվով 16 Հատ IP Camera , 5Հատ switch, 5 հատ Power Supply, այդ բաժանմունքների ընդհանուր մակերեսը 1500 մ/ք է, 6 և 7-րդ բաժանմունքներում ոստիկանության պահակակետերում տեղադրվում է 2 NVR և 2 մոնիթոր, և տրում է կարգավորումներ որպեսզի ոստիկանության աշխատակիցները կարողանան տեսնել բակի բոլոր տեսախցիկները:

Ընդհանուր շինության բակի տարացքում տեղադրվում է թվով 20 հատ տեսաղցիկ 5 Հատ switch, 5 հատ Power Supply և այդ բոլորը միանում է ընդհանուր ցանցին;

Վարչությունում տեղադրվում է թվով 26 հատ տեսախցիկ 3 Հատ switch, 8 հատ Power Supply 4 հարկերում:

Հիվանդանոցի անցակետում տեղադրվում է թվով 1 համակարգիչ, համակարգչի մեջ տեղադրվում է Windows 10 pro, IVMS -5000 Series և տեսախցիկների կարգավորումները որպեսզի համակարգչով տեսնեն բակի տարացքի տեսաղցիկները:

Մոնիթորինգի սենյակում տեղադրվում է թվով 2 NVR 32 chanal որին միանում է 56 Հատ IP Camera, կառուցվում է կառավարման կետ, Ընդհանուր օկտագորցվում է 2440 մետր FTP Cabel, 56 Հատ IP Camera 20 Հատ Switch 25 Հատ Power Supplay, 4 հատ NVR , 5 հատ համակարգիչ:

Պահանջվող սարքեր ևսարքավորումներ				
	Անվանումը/ նպատակը	Նկարագիրը	Չափման միավորը	Քանակը
	Տեսաձայնագրիչ	Թվային տեսաձայնագրիչ DS-7632NI-K2	Հատ	2
	Տեսաձայնագրիչ	Թվային տեսաձայնագրիչ DS-768NI-K2	Հատ	2
	Տեսախցիկ	Թվային կամերա DS-2CD1323G0-IU	Հատ	56
	Սնուցման Բլոկ	Սնուցման բլոկ ադապտեր 10Ա 180Վտ Փոփոխական հոսանքի լարումը 110/220 AC-ից անցում DC 12Վ	Հատ	25
	Մալուխ	FTP Մալուխ 305մ FPC-5004E-SOL CAT5E FTP	կապոց	8
	Անջատիչ	Անջատիչ Switch 8 x 10/100/1000Mbps RJ45 Պորտեր	Հատ	20
	Ցանցի միացում	Ցանցային միացնող սարք	Հատ	800
	Անխափան սնուցման սարք	UPS APC BV1000I-GR 1000VA 600W 4x Ընդհանուր 10րոպե՞60րոպե 6 Ժամ	Հատ	1
	Կոշտ սկավառակ	ST4000VX0023 SkyHawk 4 ՏԲ 256 Գբ 7200 rpm	Հատ	4
0	Աշխատանք	Տեղադրման, փորձարկման, մեկնարկման աշխատանքներ	Հատ	1
1	Համակարգիչ	H 310M-C 2 x DDR 4, Max. 32GB 1xVGA, , 1x DVI 1x M.2. SLOT , intel G4930, Intel orginal Samsung DDR4 4GB 2400MHZ, Samsung 970 EVO MZ-V7S250B/AM 250GB up to 3500 up to 3300 PCI-e NVMe 1.3, (COOPER MASTER) B 52 385 x 185 x 410mm Rear 1 x 120,side : 1 x 120, 1x USB 3+2xUSB2 450w 120mm fan, LG 20MK400 19,5" TFT TN HD 1366x768, DX-120 USB, Smart KB-100 USB	Հատ	5
2	Տպիչ	CANON LPB 6030 18 стр/мин 32Mb 600 x 600 dpi	Հատ	5

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի, 5-րդ մասի համաձայն, եթե որևէ գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պատունակում որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, ապա դեպքում մասնակիցները կարող են ներկայացնել տվյալ գնման առարկայի համարժեքը՝ միաժամանակ հայտով ներկայացնելով համարժեքը ներկայացվող տվյալ գնման առարկայի հատկանիշները:

«Սի Թի էՍ» ՍՊԸ-ն մինչև հայտեր ներկայացնելու վերջնաժամկետը լրանալը պարզաբանում ստանալու նպատակով դիմել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի և խնդրել տալ պարզաբանում հետևյալ հարցերի վերաբերյալ.

«Ծանոթանալով ապրանքացանկին և տեխ բնութագրորին, մեզ մոտ արաջացան հետևյալ հարցերը՝

1. Ապրանքացանկի երրորդ կետում ապրանքի տեխ բնութագիրը հետևյալն է, մեջբերում <<Սնուցման բլոկ ադապտեր 10Ա 180Վտ, DC 12Վ>>, տվյալ տեխ. բնութագրաով հոսանքի սնուցման բլոկ չի կարող գոյություն ունենալ, խնդրում եմ ճշգրտել,

2. Ապրանքացանկից կարելի է ենթադրել, որ չի օգտագործվում լայն տարածում ունեցող POE տեխնոլոգիան, այլ օգտագործվում է 12v սնուցման բլոկերով տեսախցիկներին սնելու տեխնոլոգիան: Եթե իրավացի եմ, խնդրում եմ ճշգրտել, 12v հոսանքը դեպի տեսախցիկներ պետք է հասցնել նույն ցանցային մալուխով, թե առանձին մոնտաժվող հոսանքի մալուխով,

3. Յոթերորդ կետում տեխ բնութագրում նշված է <<Ցանցային միացնող սարք>>: Խնդրում եմ ավելի հստակ նշել սարքի անվանումը, քանի-որ տվյալ անվանման տակ բազում սարքեր կարելի է ինկատի ունենալ,

4. Հինգերորդ կետում նշված մալուխը նախատեսված է օգտագործել բացառապես շինության ներսում: Դրսի տեսախցիկների մոնտաժման աշխատանքները, ի՞նչ մալուխով է իրականացվելու:

5. Ութերորդ կետում ապրանքի տեխ բնութագրում նշված է <<UPS APC BV1000I-GR 1000VA 600W4x Ընդհանուր 10րոպե~60րոպե 6 ժամ>>, Ի՞նչ է նշանակում <<4x Ընդհանուր 10րոպե~60րոպե 6 ժամ >> տվյալը:

6. Խնդրում ենք տրամադրել գծագիր, որում նշված են տեղադրվող սարքերի կետերը, տարածք/շինությունների չափսերով:

7. Տասնմեկերորդ կետում նշված համակարգչի տեխ. բնութագրի մեջ գրված չէ օպերացիոն համակարգի պահանջ, ինչը հակասում է ընդհանուր տեխնիկկաան բնութագրին, որում նշվում է, որ համակարգչի մեջ տեղադրվում է win10 pro համակարգ: Ո՞ր պահանջով է պետք առաջնորդվել:

8. Ապրանքացանկում չկա ինֆորմացիա մոնտաժային տուփ/արկղերի և մալուխների համար նախատեսված ճկուն խողովակների (գոֆրա կամ կորոբ), ինչը թույլ է տալիս ենթադրել, որ սարքերն և մալուխները մոնտաժվելու են ամբողջովին բաց եղանակով և չեն տեղադրվելու տուփերի մեջ: Արդյոք ճի՞շտ է մեր այս ենթադրությունը:»

Ընթացակրագի գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացվել է հետևյալ պատասխանը՝

1. 110/220V

2. Ցանցային մալուխով

3. CANECTOR

4. FTP մալուխը նաև դռսի համար

5. UPS-ի հոսանքի պահպանման և լիցքավորման ժամանակ

7. Պետք է տեղադրել Windous 10 Pro

8. Մեզ մոտ արդեն ունենք տեղադրված տուփերը, պետք է տեղադրել տուփերի մեջ:

«ՀԱՊԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ընտրված մասնակից է ճանաչվել «Սի Թի Էս» ՍՊԸ-ն:

2020թ. օգոստոսի 17-ին «ՀԱՊԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ ընտրված մասնակից՝ «Սի Թի Էս» ՍՊԸ-ին ուղարկվել է պայմանգիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծ: Պայմանագիր կնքելու ժամկետ է սահմանվել մինչև 2020թ. օգոստոսի 31-ը ներառյալ:

Ընկերությունը 21.08.2020թ. գրությամբ (գրության անվանումն է ՝ պայմանագրի կնքման առաջարկի վերաբերյալ որոշման ծանուցում) դիմել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, սպառիչ ցանկով մատնանշել տեխնիկական բնութագրում առկա բազմաթիվ խնդիրներ, որոնք ի հայտ են եկել միայն 19 օգոստոսի 2020թ ՀՀ ԱՆ ՀԱՊԱԿ տնօրենի, գնումների մասնագետի և համակարգչային մասնագետի հետ հանդիպման, իսկ այնուհետև ՀՀ ԱՆ ՀԱՊԱԿ տարածքի զննության արդյունում:

Նույն գրությամբ ստեղծված իրավիճակին որպես լուծում, ՍՊԸ-ն առաջարկել է.

1. Չեղարկել մրցույթի արդյունքները:

2. Կազմել նոր նախագիծ, հաշվի առնելով շենքային և մնացած բոլոր առանձնահատկությունները, լավագույն րդյունք ստանալու համար:

3. Պարտադիր գծագրել: Գծագրի վրա հստակ նշել տեսախցիկների տեղադրվելու վայրերը և բոլոր հանգույցների գտնվելու վայրերը:

4. Մանրակրկիտ նկարագրել գնման առարկա հանդիսացող նյութական և ոչ նյութական ապրանքները: Ինչպես նաև մանրմասն նկարագրել կատարվող աշխատանքների տեսակը և էությունը:

5. Անշահախնդիր, առաջարկում ենք մեր մասնագետների օգնությունը գծագրման և նոր կազմելու հարցում:»

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.08.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության՝

«2-րդ կետի համաձայն՝ 2020թ. օգոստոսի 17-ին «ՀԱՊԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ ընտրված մասնակից՝ «Սի Թի Էս» ՍՊԸ-ին ուղարկվել է պայմանգիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծ:

Մասնակցին տրվել է 10 աշխատանքային օր մինչև՝ 31.08.2020թ. ժամանակ, որպեսզի ներկայացնի հաստատված պայմանագիրը, սակայն ընտրված մասնակիցը օգոստոսի 21-ին գրություն է ներկայացրել պատվիրատուին, որով հրաժարվում է պայմանագիրը կնքելուց, ուստի հանձնաժողովը որոշեց համաձայն «ՀԱՊԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 8.20-րդ կետի ընտրվված մասնակից ճանաչել հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Կամի Գրուպ» ՍՊԸ-ին:

3-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Սի Թի Էս» ՍՊԸ-ի կողմից ներկայցված հայտը, քանի որ որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանգիր կնքելուց:»

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.08.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությունը «Սի Թի Էս» ՍՊԸ-ին չի ուղարկվել, և հրապարակվել www.gnumner.am կայքում միայն 24.08.02020թ.:

Հստանալով 21.08.2020թ. գրության պատասխանը՝ «Սի Թի Էս» ՍՊԸ-ն 25.08.2020թ. գրությամբ (կցվում է) դիմել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և հայտնել հետևյալը.

«Մեր կողմից, 21.08.2020թ., Ձեզ ներկայացված ծանուցման մեջ ստեղծված իրավիճակի, մեր կողմից առաջարկվող լուծումն այն է՝ չեղարկել մրցույթի արդյունքները, Ձեր կողմից ընդունելի չէ, պայմանագիրը կնքելու նպատակով, տրամադրում եմ պարզաբանում՝ մեր կողմից մատակարարվող ապրանքների ցանկում, ինչպես և մեր առաջարկում նշված էր՝ չեն ներառվելու Microsoft Office և Hikvision ivms5000 series ծրագրային փաթեթների արտոնագրերը:

Եթե տվյալ իրողությունը ընդունելի է Ձեր համար, ինչը որ չի հակասում գնման առարկաների Ձեր կողմից տրամադրված ցանկին, հաշվի առնելով երկրում տիրող իրավիճակը, ինչը, միգուցե, պատճառ է հանդիսացել ստեղծված թյուրիմացությանը, մեր կազմակերպությունը, համակարգիչները կմատակարարի արդեն իսկ տեղադրված Windows 10 օպերացիոն համակարգով, չնայած այն հանգամանքի, որ մեր ներկայացրած տեխ. բնութագրում և նախահաշվով ներառված չէր տվյալ օպերացիոն համակարգը:

Ձեր կողմից, դրական պատասխան տրամադրելու դեպքում, մենք պատրաստ ենք նույն պահին կնքել «ՀԱՊԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/2» պայմանագիրը:

Խնդրում եմ պատասխանը տրամադրել մինչև 26.08.2020թ. օրվա ավարտը:»

Պատվիրատուն 26.08.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«21.08.2020թ. Ձեր կողմից ներկայացված գրությամբ հրաժարվել էիք պայմանագիր կնքելուց և մեզ մոտ առկա էր տվյալ աշխատանքի կատարման անհրաժեշտությունը շատ շտապ, ուստի 21.08.2020թ.-ին կազմակերպվել է գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստ, որի ընթացքում համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ մասի բ. պարբերության՝ «որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց», գնահատող հանձնաժողովը մերժել է Ձեր կողմից ներկայացված հայտը և համաձայն «ՀԱՊԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.20-րդ կետի՝ ընտրված մասնակից է ճանաչել հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին՝ Կամի Գրում ՍՊԸ-ին: »

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբա-նությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետու¬թյունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

4. Մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ փաստերի վրա, որոնք, ըստ «Սի Թի Էս» ՍՊԸ-ի, էական նշանակություն ունեն թիվ ՍՑ-ՆԳ-2020/225 ընթացակարգով որոշում կայացնելու համար, մասնավորապես.

ա) «Սի Թի Էս» ՍՊԸ-ն մինչև հայտեր ներկայացնելու վերջնաժամկետը լրանալը պարզաբանում ստանալու նպատակով դիմել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի և, ի թիվս այլ հարցերի, 6-րդ կետով խնդրել է տրամադրել գծագիր, որում նշված են

տեղադրվող սարքերի կետերը՝ տարածք/շինությունների չափսերով: Սակայն պատվիրատուն ոչ տրամադրել է պահանջված գծագիրը, որ էլ ներկայացրել որևէ պատասխան/հիմնավորում՝ գծագիրը չներկայացնելու վերաբերյալ:

Մինչդեռ եթե ՍՊԸ-ին տրամադրվեր գծագիր, որում նշված կլիներին տեղադրվող սարքերի կետերը, տարածք/շինությունների չափսերով, ապա.

1. Մատակարարը նախօրոք կպարզեր, որ խախտվում են մալուխի թույլատրելի մաքսիմալ օգտագործվող երկարությունը, ինչը իր հետ բերում է ընդանուր համակարգի աշխատնքի խափանումների:

2. Խախտվում են արտադրողի կողմից սահմանված մալուխի շահագործման պայմանները, նրանք են՝ տվյալ պալուխը չի կարելի օգտագործել վերտիկալ մոնտաժային աշխատանքների համար, տվյալ մալուխը չի կարելի օգտագործել թռիչքային լարանցման ժամանակ:

բ) 2020թ. օգոստոսի 17-ին «ՀԱՊԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ ընտրված մասնակից՝ «Սի Թի էՍ» ՍՊԸ-ին ուղարկվել է պայմանգիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծ: Պայմանագիր կնքելու ժամկետ է սահմանվել մինչև 2020թ. օգոստոսի 31-ը ներառյալ:

Ընկերությունը 21.08.2020թ. գրությամբ դիմել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և մատնանաշել, որ պայմանագրի բնութագիրը չի համապատասխանում իրականում պահանջվող կատարվելիք աշխատանքներին, ինչը պարզ է դարձել միայն աշխատանքային տարածքը այցելելուց հետո: Վերոհիշյալ գրությամբ «Սի Թի էՍ» ՍՊԸ-ն առաջարկել է չեղարկել մրցույթի արդյունքները, կազմել նոր նախագիծ՝ հաշվի առնելով շենքային և մնացած բոլոր առանձնահատկությունները, լավագույն արդյունք ստանալու համար՝ գծագրի վրա հստակ նշելով տեսախցիկների տեղադրվելու վայրերը և բոլոր հանգույցների գտնվելու վայրերը, մանրակրկիտ նկարագրել գնման առարկա հանդիսացող նյութական և ոչ նյութական ապրանքները, ինչպես նաև մանրմասն նկարագրել կատարվող աշխատանքների տեսակը և էությունը:

Գնահատող հանձնաժողովը, պատասխան ներկայացնելու փոխարեն, նույն օրը, այն է՝ 21.08.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ «Սի Թի էՍ» ՍՊԸ-ին զրկել է պայմանագիր կնքելու իրավունքից, մինչդեռ Ընկերությունը 21.08.2020թ. գրությունը կրում էր բացառապես առաջարկի բնույթ, և եթե Պատվիրատուն ի պատասխան տվյալ գրության՝ հայտներ, որ իր համար ընդունելի չեն գրությամբ արված առաջարկները, ապա ՍՊԸ-ն ձեռնամուխ կլիներ պայմանագրի կնքման գործընթացին:

Վերոհիշյալ փաստի օգտին է խոսում այն հանգամանքը, որ «Սի Թի էՍ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովին ուղղված 25.08.2020թ. գրությամբ հայտնել է, որ պատրաստ է կնքել պայմանագիր: Սակայն Պատվիրատուն 26.08.2020թ. գրությամբ հայտնել է, որ «Սի Թի էՍ» ՍՊԸ-ն արդեն իսկ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից՝ պայմանագիր կնքելուց հրաժարվելու հիմքով:

Մինչդեռ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը հստակ ամրագրում է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Իսկ ինչպես երևում է բերված փաստերից՝ մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից՝ 10 աշխատանքային օրվա ժամկետը չլրացած (ժամկետը սահմանված էր մինչև 31.08.2020թ., իրավունքից զրկվել է 21.08.2020թ.):

Ինչ վերաբերում է գնահատող հանձնաժողովի այն փաստարկին, որ ՍՊԸ-ն 21.08.2020թ. գրությամբ հրաժարվել է պայմանագիր կնքելուց, ապա վերոհիշյալ գրությունից հրաժարումը ուղղակիորեն չի բխում: Գրությունը կարելի է բնութագրել որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պայմանագրի կնքման փուլում բանակցային գործընթաց, բայց ոչ պայմանագիր կնքելուց հրաժարում:

Գտնում ենք, որ տվյալ իրավիճակում գնահատող հանձնաժողովը առնվազն պետք է պատասխաներ ՍՊԸ-ի 21.08.2020թ. գրությամբ արված առաջարկին, իսկ առաջարկը մերժելու դեպքում «Սի Թի էՍ» ՍՊԸ-ն ձեռնամուխ կլիներ պայմանագիր կնքելու գործընթացին, ինչի մասին ՍՊԸ-ն հայտնել էր արդեն իր 25.08.2020թ. գրությամբ:

Գտնում ենք, որ «Սի Թի էՍ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելուց զրկումը այս տեսանկյունից եղել է ոչ իրավաչափ:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ Ընթացակարգի հրավերի տեխ. բնութագիրը չի համապատասխանում իրականում պահանջվող կատավելիք աշխատանքներին:

Հայաստանում կորոնավիրուսով ստեղծված իրավիճակից ելնելով, Ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող կազմակերպությունները զրկված են եղել մինչև Ընթացակարգին մասնակցելը իրականացնել ՀՀ ԱՆ ՀԱՊԱԿ տարածքի զննություն, ինչպես նաև, հանդիպում ունենալ ՀԱՊԱԿ համապատասխան մասնագետի հետ: Տվյալ սահմանափակումը սահմանվել է Պատվիրատուի կողմից: Վերոնշված փաստարկները

հաշվի առնելով, «Սի Թի էՍ» ՍՊԸ-ն՝ որպես մատակարար կազմակերպություն, հիմնվել էմրցույթի փաստաթղթերում առկա տեխնիկական բնութագրի վրա և պատրաստ եղել Հրավերի պահանջներին համապատասխան մատակարարել և իրականցնել տեղադրման աշխատանքները:

Պայմանագիր կնքելու հրավեր ստանալուն պես, 19 օգոստոսի 2020թ «Սի Թի էՍ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները հանդիպել են ՀՀ ԱՆ ՀԱՊԱԿ տնօրեն-ի, գնումների մասնագեի և համակարգչային մասնագետի հետ:

Աշխատանքների պլանավորման և պայմանագիրը վերջնական կնքելու նպատակով կատարված ճշտումների արդյունքում պարզվել է, որ ՀՀ ԱՆ ՀԱՊԱԿ-ը չի կարող ապահովել այն բավարար պայմանները, որոնք թույլ կտան Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում նշված աշխատանքները բնականոն ավարտին հասցնելը առանց խախտումների:

Սխալ նախագծման արդյունքում առաջ եկած տեխնիկական խնդիրներ են.

1. Գծագրից և տարածքի զննությունից, պարզ է դառնում, որ որոշ վայրերում անրաժեշտություն կա լարանցումը իրականացնել շինություններից դուրս, բացի այդ տարածքում առկա է երեք շինություն (պահակակետեր և 6-7 բաժանմունքները), որոնք կտրված են հիմնական մասնաշենքից, ինչը ենթադրում է, որ տվյալ մասնաշենքերը հիմնականի հետ միացնելու համար անրաժեշտ է մալուխ, որը ունի գնորդի կողմից ձեռք բերվող մալուխը օգտագործելը կոպիտ սխալ է, քանի որ տվյալ դեպքերում պետք է օգտագործել բացառապես արևի ճառագայթների և այլ բնության երևույթների հանդեպ դիմացկուն, ճոպանով մալուխ:

2. Գնորդը աշխատանքների մեջ փաստացի ներառվում է ՀՀ ԱՆ ՀԱՊԱԿ տարածքում տեղադրված և խափանումներով գործող անալոգային համակարգի վերականգնումը, տեսախցիկների տեղափոխումը: Անալոգային համակարգի չաշխատող տեսախցիկների պատճառը ի հայտ բերել և շտկել:

Տվյալ իրողությունը, armeps համակարգում տրված պարզաբանման մեջ նկարագրված է հետևյալ կերպ, մեջբերում պարզաբանումից՝ «Մենք ունենք դրսի տեսախցիկ, դա դեռ չենք բերելու, ուղղակի պետք է տեղադրվի»: Ինչը բացարձակ չի համապատասխանում իրականությանը: Իր հերթին տվյալ հանգամանքը առաջ է քաշում բազում այլ խնդիրներ: Առաջինը՝ համաձայն պայմանագրի, մատակարարը պարտավոր է տրամադրել մեկ տարի երաշխիք, ինչը անտրամաբանական է, երբ խոսքը գնում է անհայտ ծագման, մոտ մեկ տասնամյակ ծառայած, բարոյապես մաշված համակարգի մասին:

Երկրորդը՝ պատվիրատուի տարածքում արդեն իսկ տեղադրված տեսահսկման համակարգը անալոգային է, իսկ գնամ առարկա հանդիսացող համակարգը թվային: Տվյալ երկու համակարգերը ունեն շատ քիչ ընդհանրություններ և նախագիծ կազմող մասնագետը պարտավոր է հավուր պատշաճի տեխ բնութագրի մեջ տեղեկացնել անալոգային համակարգի մասին:

Երրորդը՝ մատակարարին փաստացի պետք է վերանորոգել խափանումներով գործող համակարգը, ենթադրաբար փոխարինելով անսարք տեսախցիկները, տեղափոխել արդեն իսկ տեղադրված տեսախցիկները մեկ այլ վայր և այլ աշխատանքներ, որոնք բացարձակ որևիցե առնչություն չունեն թվային համակարգի հետ:

3. 55 մետր մալուխի երկարության և տեսախցիկների գիշերային ինֆրակարմիր լուսավորությունը միանալու դեպքում, տեսախցիկին հասնող լարումը նորմալ համարվող 12վոլտից նվազում է մինչև 9.7 վոլտ: Այսինքն, անխափան աշխատանք ապահովելու նպատակով, յուրաքանչուր տեսախցիկին միացվող մալուխի երկարությունը, չպետք է գերազանցի 40 մետրը: Նախագծին տեղում ծանոթանալուց հետո, պարզ դարձավ, որ բազմաթիվ կետերում մալուխի երկարությունը կարող է հասնել և գերազանցել 75 մետրը:

դ) Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ ՀՀ ԱՆ ՀԱՊԱԿ-ը չունի համապատասխան ծրագրային ապահովումների արտոնագրերը, որոնց տեղադրումը պահանջում է մատակարարից:

Հանդիպման ժամանակ «Սի Թի էՍ» ՍՊԸ-ի առջև դրվել է պահանջ, այն է՝ մատակարարել գնման առարկա չհանդիսացող, գնման ենթակա անպրանքացանկի մեջ չներառված ծրագրային ապահովումների արտոնագրերը, ինչից մենք, բնականաբար, հրաժարվեցինք: Տվյալ արտոնագրերի մասին հիշատակում նաև չկա մեր՝ հաղթող ճանաչված առաջարկի մեջ: Մեր արջև դրված անհիմն պահանջում խոսվում էր թվով հինգ համակարգիչների համար արտոնագրեր տրամադրելու, յուրաքանչյուր համակարգչի համար միջին շուկայական արժեքը կազմում է 400.000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

Գրավոր ծանուցումով «Սի Թի էՍ» ՍՊԸ-ն դիմել է ՀԱՊԱԿ տնօրենին, մանրակրկիտ նկարագրելով բոլոր թույլ տված սխալները, որոնք նախօրոք, առանց տարածքի զննության, հնարավոր չէր պարզել: Որպես հաղթող կազմակերպություն, հրաժարվել ենք պայմանագիր կնքելուց, քանի որ տվյալ պայմանագրի կնքումը ինչպես նաև կատարվելիք աշխատանքները հնարավոր չէն կատարել առանց խախտումների: Ծանուցման մեջ հայտնել ենք մեր պատրաստակամությունը մատակարարել ցանկում նշված բոլոր ապրանքները, բայց, ի սկզբանե, Ընթքացակարգի տեխ բնութագրի սխալ շարադրանքի և

նախագծման փուլում թույլ տված կոպիտ սխալների հետևանքով տվյալ նախագիծը հնարավոր չի կյանքի կոչել: Որպես խնդրի լուծում, «Սի Թի ԷՍ» ՍՊԸ-ն առաջարկել է չեղարկել մրցույթի արդյունքները և հայտարարել նոր մրցույթ, որում, հավուր պատշաճի, շարադրված կլինեն գնորդի բոլոր պահանջները կարտացելի գնորդի իրական պահանջները: Ցավոք, չստանալով պատասխան, մեր հաղթանակը կասեցվել է և փոխանցվել է հաջորդ մասնակցին:

Բանավոր զրույցի ընթացքում պարզ դարձավ, որ տեխնիկական բնութագրի աշխատանքների նկարագրության դաշտում ընդամենը մեկ անգամ հիշատակելով Microsoft Windows 10 pro և Microsoft Office2016 ծրագրային փաթեթները, նախագծող մասնագետը ինկատի է ունեցել Microsoft Office 2019 pro plus(pro plus տարբերակը պարտադիր է, քանի որ պարտադիր պայման է exel, word, acces և power point ծրագրերի առկայությունը փափեթում): Խնդրում եմ, ուշադրություն դարձնել, որ մեր կողմից ներկայացված առաջարկը, որը ճանաչվել է հաղթող գնահատող հանձնաժողովի կողմից, չի պարունակում ոչ մի հիշատակում Microsoft office կամ Microsoft Windows համակարգերի մատակարարման վերաբերյալ:

Երկու մեջբերում տեխ բնութագրից՝ «1, 2, 3,4,5,8,9 երորդ բաժանմունքում տեղադրվում է թվով 1 համակարգիչ, համակարգչի մեջ տեղադրվում է Windows 10 pro,office 2016» «Հիվանդանոցի անցակետում տեղադրվում է թվով 1 համակարգիչ, համակարգչի մեջ տեղադրվում է Windows 10 pro, IVMS -5000 Series »:

Վերոնշված երկու մեջբերումներից կարելի է ենթադրել, որ գնորդը արդեն իսկ ունի ձեռք բերված ծրագրային ապահավում, քանի որ մատակարարվող համակարգիչները թվով հինգն են, իսկ պահանջվող ծրագրային փաթեթների քանակները թվով ութը:

Գնորդի պահանջի տրամաբանության վրա հիմնվելով, կարելի է նաև մատակարարից պահանջել ևս երեք համակարգիչ, քանի որ տեադրվող համակարգիչների քանակը պետք է լինեն թվով ութը:

2. IVMS -5000 Series կամ համարժեք Hikcentral ծրագրային ապահովումները անվճար չեն: Ծրագրի արժեքը գոյանում է տեսախցիկների քանակից և գնորդի կազմած տեխնիկական պահանջներից: Ակնհայտ է, որ որևիցե տեխնիկական բնութագրի նկարագիր չկա տեխնիկական առաջադրանքի մեջ, ինչը մատակարարին միանշանակ թույլ է տալիս ենթադրել, որ գնորդը արդեն իսկ ունի տվյալ ծրագրի արտոնագիրը:

Հարկ եմ համարում նորից նշել, որ «Սի Թի էՍ» ՍՊԸ-ին չի տրամադրվել գծագիր, չենք ունեցել հնարավորություն տարածքի զննության, հաշվի առնելով երկրում ստեղծված իրավիճակը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք «Սի Թի էՍ» ՍՊԸ-ին չվերագրել Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2020/205 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ներքին համակարգչային ցանցի եվ վիդեոխցիկների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով 23.07.2020թ.-ին հայտարարվել է «ՀԱՊԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Սի Թի էս» ՍՊԸ-ն:

ii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 07.08.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներից որոշել է «Սի Թի էս» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ սահմանվել է անգործության ժամկետ՝ ծանուցման օրվան հոջորդող օրվանից հաշված 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

iii. Պատվիրատուն 17.08.2020թ.-ին armeps.am համակարգի միջոցով Մասնակցի mr.comp@list.ru էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացրել է «ՀԱՊԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

iv. Մասնակիցը 21.08.2020թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և առաջարկել է

- չեղարկել մրցույթի արդյունքները,

- կազմել նոր նախագիծ, հաշվի առնելով շարքային և մնացած բոլոր առանձնահատկությունները, լավագույն արդյունք ստանալու համար,

- պարտադիր գծագրել և գծագրի վրա հստակ նշել տեսախցիկների տեղադրվելու վայրերը և բոլոր հանգույցների գտնվելու վայրերը,

- մանրակրկիտ նկարագրել գնման առարկա հանդիսացող նյութական և ոչ նյութական ապրանքները, ինչպես նաև մանրամասն նկարագրել կատարվող աշխատանքների տեսակը և էությունը:

v. Հանձնաժողովի 21.08.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ 2020թ.-ի օգոստոսի 17-ին «ՀՄՊՄԿ-ԳՀՄՇՁԲ-20/2» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից՝ «Սի Թի Էս» ՍՊԸ-ին ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծ:

Մասնակցին տրվել է 10 աշխատանքային օր մինչև՝ 31.08.2020թ.-ը ժամանակ, որպեսզի վերջինս ներկայացնի հաստատված պայմանագիրը, սակայն Մասնակիցը օգոստոսի 21-ին գրություն է ներկայացրել պատվիրատուին, որով հրաժարվել է պայմանագիր կնքելուց, ուստի Հանձնաժողովը, որոշել է գնման ընթացակարգի հրավերի 8.20-րդ կետի համաձայն ընտրված մասնակից ճանաչել հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Կամի Գրուպ» ՍՊԸ-ին:

vi. Մասնակիցը 25.08.2020թ.-ին կրկին դիմել է Պատվիրատուին՝ հայտնելով հետևյալը.

«Մեր կողմից 21 օգոստոսի 2020թ, Ձեզ ներկայացված ծանուցման մեջ ստեղծված իրավիճակի, մեր կողմից առաջարկվող լուծումն այն է՝ չեղարկել մրցույթի արդյունքները Ձեր կողմից ընդունելի չէ, պայմանագիրը կնքելու նպատակով, տրամադրում եմ պարզաբանում մեր կողմից մատակակարվող ապրանքների ցանկում, ինչպես և մեր առաջարկում նշված էր՝ չեն ներառվելու Microsoft Office և Hikvision ivms5000 series ծրագրային փաթեթների արտոնագրերը:

Եթե տվյալ իրողությունը ընդունելի է Ձեր համար, ինչը որ չի հակասում գնման առարկաների Ձեր կողմից տրամադրված ցանկին, հաշվի առնելով երկրում տիրող իրավիճակը, ինչը, միգուցե, պատճառ է հանդիսացել ստեղծված թյուրիմացությանը, մեր կազմակերպությունը, համակարգիչները կմատակարարի արդեն իսկ տեղադրված Windows 10 օպերացիոն համակարգով, չնայած այն հանգամանքի, որ մեր ներկայացրած տեխ բնութագրում և նախահաշվով ներառված չէր տվյալ օպերացիոն համակարգը:

Ձեր կողմից, դրական պատասխան տրամադրելու դեպքում, մենք պատրաստ ենք նույն պահին կնքել N ՀԱՊԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/1 պայմանադիրը:

Խնդրում եմ պատասխանը տրամադրել մինչև 26 օգոաաա 2020թ օրվա ավարտը:

Կնիքով հաստատված պատասխանի սկանավորված տարբերակը կարող եք ուղարկել mrcomp@list.ru էլ հասցեին:»:

vii. Ի պատասխան վերոնշյալ գրության, Պատվիրատուն 26.08.2020թ.-ի թիվ 1242/20 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Քանի որ օգոստոսի 21-ին Ձեր կողմից ներկայացված գրությամբ հրաժարվել էիք պայմանագիրը կնքելուց և մեզ մոտ առկա էր տվյալ աշխատանքի կատարման անհրաժեշտությունը շատ շտապ, ուստի իմ հանձնարարությամբ օգոստոսի 21-ին կազմակերպվել է գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստ, որի ընթացքում համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ մասի բ. պարբերության «որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց», գնահատող հանձնաժողովը մերժել է Ձեր կողմից ներկայացված հայտը և համաձայն ՀԱՊ ԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.20-րդ կետի ընտրված մասնակից է ճանաչել հաջորդող տեղը գյապեցրած մասնակցին Կամի Գրուպ ՍՊԸ-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գնումների համակարգողը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել է http://gnumner.am/ հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում, ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը 24.08.2020թ.-ին:

Ուստի այլևս անհնարին է օգոստոսի 25-ին Ձեր կողմից ներկայացված գրությանը դրական պատասխան տալ»:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13360-2020 գրությամբ «Սի Թի Էս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և

պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է **մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներքին համակարգչային ցանցի եվ վիդեոխցիկների տեղադրման

աշխատանքների ձեռքբերման նպատակով 23.07.2020թ.-ին հայտարարված «ՀԱՊԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ գնահատող հանձնաժողովի 07.08.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներից որոշել է «Սի Թի Էս» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից, ինչով պայմանավորված պատվիրատուն 17.08.2020թ.-ին armeps.am համակարգի միջոցով Մասնակցի mr.comp@list.ru էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացրել է «ՀԱՊԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Մասնակիցը 21.08.2020թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և առաջարկել է

- չեղարկել մրցույթի արդյունքները,

- կազմել նոր նախագիծ, հաշվի առնելով շարքային և մնացած բոլոր առանձնահատկությունները, լավագույն արդյունք ստանալու համար,

- պարտադիր գծագրել և գծագրի վրա հստակ նշել տեսախցիկների տեղադրվելու վայրերը և բոլոր հանգույցների գտնվելու վայրերը,

- մանրակրկիտ նկարագրել գնման առարկա հանդիսացող նյութական և ոչ նյութական ապրանքները, ինչպես նաև մանրամասն նկարագրել կատարվող աշխատանքների տեսակը և էությունը:

Հանձնաժողովի 21.08.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ 2020թ.-ի օգոստոսի 17-ին «ՀՄՊՄԿ-ԳՀՄՇՁԲ-20/2» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից՝ «Սի Թի Էս» ՍՊԸ-ին ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծ:

Մասնակցին տրվել է 10 աշխատանքային օր մինչև՝ 31.08.2020թ.-ը ժամանակ, որպեսզի վերջինս ներկայացնի հաստատված պայմանագիրը, սակայն Մասնակիցը օգոստոսի 21-ին գրություն է ներկայացրել պատվիրատուին, որով հրաժարվել է պայմանագիր կնքելուց, ուստի Հանձնաժողովը, որոշել է գնման ընթացակարգի հրավերի 8.20-րդ կետի համաձայն ընտրված մասնակից ճանաչել հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Կամի Գրուպ» ՍՊԸ-ին:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի

քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է որ Պատվիրատուն 17.08.2020թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ՀԱՊԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, ապա 21.08.2020թ.-ին ստանալով Մասնակցի կողմից գրությամբ ներկայացված առաջարկները՝ համարել է այն որպես պայմանագիր կնքելուց հրաժարում, նույն օրը՝ 21.08.2020թ.-ին հրավիրել է Հանձնաժողովի նիստ և որոշել է «Սի Թի Էս» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից, այն դեպքում, երբ Մասնակցի կողմից պայմանագրի ստորագրված տարբերակը ներկայացնելու համար ծանուցումը ստանալու պահից հաշված՝ Օրենքով սահմանված 10 աշխատանքային օրյա ժամկետը լրանալու էր 31.08.2020թ.-ը ներառյալ, ինչը արձանագրվել է նաև Հանձնաժողովի կողմից:

Ընդ որում, Մասնակիցը մինչև 31.08.2020թ.-ին չի դիմել Պատվիրատուին և չի հրաժարվել պայմանագիր կնքելուց, այլ ընդամենը ներկայացրել է գրություն՝ որոշ առաջարկներով, որպիսի հանգամանքը Հանձնաժողովը չէր կարող գնահատել որպես պայմանագիր կնքելուց հրաժարվելու փաստ և մինչև Մասնակցի կողմից պայմանագրի ստորագրված տարբերակ ներկայացնելու համար Օրենքով սահմանված 10 աշխատանքային օրյա ժամկետի լրանալը՝ 31.08.2020թ.-ը ներառյալ, Հանձնաժողովն իրավասու չէր 21.08.2020թ.-ին նիստ հրավիրել և Մասնակցին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենսդիրը, պայմանագրի ապահովում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 10 աշխատանքային օրյա ժամկետ, գնման

գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ պայմանագրի և որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորությունները: Ուստի Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելու մասին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13360-2020 գրությամբ «Սի Թի Էս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/205 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ